


ИСТОРИЯ

Հայ Ժողովրդական կուսակցության սոցիալ-դասակարգային բնույթը

Սարգսյան Սուրեն Թ.

*պ.գ.դ., պրոֆեսոր, առաջատար գիտաշխատող,
ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ (Երևան, ՀՀ)*

 <https://orcid.org/0009-0005-6171-9021>
sargsyansuren@yandex.ru

ՀՏԳ՝ 327.5 (470+571, 477); EDN: IZDBCK

DOI: 10.58587/18292437-2026.1-60

Հանգուցաբառեր և բառակապակցություններ՝ քաղաքական կուսակցություն, սահմանադրական դեմոկրատներ, Հայ Ժողովրդական կուսակցություն, Ազգային հարց, ծրագիր, դասակարգային էություն, շահերի պաշտպանություն, քաղաքական կողմնորոշում

Социально-классовый характер Армянской народной партии

Саргсян Сурен Т.

д. и. н., профессор, ведущий научный сотрудник Института истории НАН РА (Ереван, РА)

Аннотация. В нынешних политизированных условиях Армении обеспечение участия граждан в политической жизни государства и в борьбе за власть партии стали ключевыми игроками. У них есть определенная социальная основа. Они включают в себя наиболее активных сторонников, объединенных одной идеологией.

Основанная в 11 апреля 1917 года. Армянская народная партия, была создана крупной восточноармянской буржуазией и выходцами из ее окружения и интеллигентами, вышедшими из его окружения, и защищал их интересы. АНП просуществовало недолго, но развернуло бурную деятельность. Четыре министра из АНП вошли в состав правительства Республики Армения, однако в результате радикальных изменений, произошедших в стране, отдав дань своим классовым убеждениям, уехал за границу.

Ключевые слова и словосочетания: политическая партия, конституционные демократы, Армянская народная партия, национальный вопрос, программа, классовая сущность, защита интересов, политическая ориентация

The Social party of the Armenian People's Party is class-based

Sargsyan Suren T.

Doctor of Sciences in History, professor, Leading Researcher, NAS RA Institute of History (Yerevan, RA)

Abstract. In the current politicized conditions of Armenia, parties have become the most important players in ensuring the participation of citizens in the political life of the state and in the struggle for power. They have a certain social basis and include the most active supporters united by one ideology.

The year is 1917. The Armenian People's Party, founded on April 11, was created by the large Eastern Armenian bourgeoisie and people from its entourage and intellectuals who came out of his entourage, and defended their interests. The application did not last long, but it developed a lot of activity.

Four ministers who have taken senior positions have joined the Government of the Republic of Armenia., However, as a result of the radical changes that took place in the country, paying tribute to his class beliefs, he went abroad.

Keywords & phrases: Political party, constitutional democrats, Armenian People's Party, national question, program, the class entity, protection of interests, political orientation, national cultural autonomy, national cultural autonomy

Ներածական

Վերջին տասնամյակներում Հայաստանում կյանքը խիստ քաղաքականացված է: Հասարակության զարգացման անհրաժեշտ ու կարևոր գործոն-բաղադրիչներ կուսակցություններն էլ, բնականաբար, կարևորագույն դերակատարներ են դարձել, քանզի ամենաքաղաքականացված այդ կառույցները պետության քաղաքական կյանքին քաղաքացիների մասնակցությունն ապահովող հիմնական միջոցներն են: Հատկապես պառլամենտարիզմի պայմաններում դրանք նպաստում են ժողովրդի քաղա-

քական կամքի ձևավորմանն ու արտահայտմանը: Կուսակցություններին միշտ բնորոշ է եղել հատկապես մասնակցությունը իշխանության համար պայքարին: Բոլոր կուսակցություններն էլ ունեն են ծրագրեր, որոնք սահմանում են իրենց ռազմավարությունն ու մարտավարությունը: Կուսակցություն է համարվում նաև այն քաղաքական կազմակերպությունը, որն ունի որոշակի սոցիալական հենք և իր մեջ ներառում է միևնույն գաղափարախոսության շուրջ համախմբված ամենաակտիվ կողմնակիցներին: Հետևապես, որևէ կուսակցության իսկա-

կան էությունն ու բնույթը հասկանալու համար հարկավոր է հատկեցնել հասարակության այն հատվածը (շերտ, խավ, դասակարգ), հիմնականում որի շահերն է պաշտպանում տվյալ կուսակցությունը: Այս դեպքում կիսոսենք հայկական կուսակցություններից թեև կարճ, բայց շոնդալից գործունեություն ծավալած Հայ Ժողովրդական կուսակցության (ՀԺԿ) սոցիալական հենքի, որպես դրա շահերի պաշտպան հանդես գալու և հետապնդած քաղաքական նպատակների մասին: ՀԺԿ-ին նվիրված որոշ ուսումնասիրություններ կան [12; 13; 17; 18; 26; 29; 30], սակայն նշված հիմնախնդրի վերաբերյալ գրեթե ոչինչ ասված չէ¹:

Խորհրդային տարիներին Հայաստանի առաջին հանրապետությունը (ՀԱՀ) հայտարարվել էր «դաշնակցական» և պետական մակարդակով արգելված էր դրա մասին որևէ դրական խոսք ասել: Ավելին, արվում էր ամեն ինչ նրա պատմությունը վատարանելու և որևէ դրական իրողություն բացառելու ուղղությամբ: Կոմունիստական վարչակարգին սպասարկող պատմագիտության կողմից դա առանձնահատուկ ջանադրաբար էր արվում, քանի որ գաղափարական հակառակորդին (տվյալ դեպքում Հայ Յեղափոխական Դաշնակցությանը՝ ՀԴԴ-ն) ավելի ուժեղ և «վտանգավոր» ներկայացնելու դեպքում իրենց կատարած գործն էլ դառնում էր ավելի կարևոր և արժանի գնահատանքի ու բարձր վարձատրության: Իսկ Սփյուռքում 1918-1920 թթ. պատմությանը սովորաբար անդրադառնում էին լոկ այն դեպքերում, երբ ավանդական կուսակցությունների միջև տարաձայնությունները սրվում էին: Արդյունքում՝ այդ ուսումնասիրություններում հիմնականում գերակայում էր սուբյեկտիվիզմը և կուսակցական գծին հավատարիմ մնալու ձգտումը:

1990-ական թթ. անկախությանը նախորդող և, հատկապես այն հռչակելուց հետո, 1918-1920 թթ-երի պատմությունն ավելորդ գունագարդվում էր: Շատ գործիչներ էլ, երբեմն ոչ իրավացիորեն, արժանանում էին լուսապակի: Նկատելի էր նաև, որ Հայաստանի նոր իշխանավորները հաճախ անհիմն մեղադրանքներ էին հնչեցնում խորհրդային պատմագրության ներկայացուցիչների հասցեին: Իսկ մեր կարծիքով պատմագիտության մեջ հարկավոր է ընդհանրապես մերժել կուսակցականությունը, ամեն ինչ լուսաբանել ճշմարիտ և անաչառ դիրքերից:

Նկատենք, որ կուսակցությունների հանդես գալու համար անհրաժեշտ են օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոններ: Օբյեկտիվ գործոններից է տվյալ երկրի սոցիալ-տնտեսական զարգացման

որոշակի մակարդակը: Այդ առումով օրինաչափ է, որ կուսակցություններն սկսեցին հանդես գալ **կապիտալիզմի** ձևավորման ժամանակաշրջանում, երբ հասարակությունը ձեռք բերեց հասունության որոշակի մակարդակ: Իսկ սուբյեկտիվ գործոն է հասարակության կրթական մակարդակի լավարկումը և սոցիալական դժվարությունները: Կուսակցություններն էլ իրենց հերթին նպաստեցին ու խթանեցին մարդկանց գիտակցական զարգացմանը: Կարճ ասած՝ կուսակցությունները միաժամանակ **հասարակության զարգացման և՛ արդյունք են, և՛ գործիք:**

Հայ իրականությունում XIX դարի վերջին քառորդին իրար հետևից ասպարեզ իջած Արմենական, Հնչակյան և Դաշնակցություն կուսակցությունները, անկախ որոշ մոդայիկ տեսությունների տուրք տալուց, լծված էին Հայկական հարցի սայլին: Իսկ սոցիալ-քաղաքական խնդիրներին վերաբերում էին որպես հեռավոր ու մշուշապատ տեսիլքի²: Այդ պատճառով էլ դրանց գործունեությունը գնահատելիս հաշվի ենք առնում նախ և առաջ ազգի շահերին և պետականության վերականգնմանը նրանց նվիրվածությունը:

XX դարի բուռն իրադարձություններով լեցուն առաջին երկու տասնամյակները նշանավորվեցին նաև հայ քաղաքական կյանքի աննախադեպ աշխուժացմամբ: Հասարակության յուրաքանչյուր շերտ՝ այդ իրավիճակում սեփական շահերի պաշտպանության նպատակով, ինքնակազմակերպվում էր, համախմբվում: Արդյունքում ստեղծվում էին նոր քաղաքական կառույցներ: Դրանցից մեկը՝ հայ ունևոր դասի շահերի արտահայտիչ Հայ Ժողովրդական կուսակցությունն (ՀԺԿ) էր, որի պատմության վերաբերյալ պահպանված և մեզ հասած փաստական նյութն այնքան էլ առատ չի: Թեմայի ուսումնասիրության և անկողմնակալ լուսաբանման համար կարևոր են Հայաստանի Ազգային արխիվի (այսուհետև՝ ՀԱԱ) թիվ 43, 199, 222, 292, 1021, 1022, 1454, 1455, 1456, 1457, 4033, 4042 և Եղիշե Չարենցի անվան Գրականության և արվեստի թանգարանի ֆոնդերում

² Այն հանգամանքը, որ գրեթե բոլոր հայ կուսակցությունների ակունքներում ունևոր դասի ծոցից դուրս եկած մտավորականությունն էր, մեր ասածի խոսուսն վկայություն է: Ակնհայտ իրողություն է նաև այն, որ չնայած նրանց ծրագրերի գունագեղ «սոցիալիստական» հանդերձանքին, Արմենականների հետ հանչակյաններն էլ, դաշնակցականներն էլ առանց դասի ու դասակարգի խտրականության իրենց շարքերն էին ընդունում բոլոր այն հայորդիներին, ովքեր պատրաստ էին պայքարել հայ ժողովրդի ազատության համար, իսկ դասակարգային ներհակություններին ու դասակարգային պայքարին բացի տեսական, հաճախ իրականությունից կտրված թերթային հրապարակում-բանավեճերից, փաստորեն ուշադրություն չէին էլ դարձնում:

¹ Միակ բացառությունը թերևս Դավիթ Խեչումյանն է: Տե՛ս [25; 32]:

պահվող նյութերը³: Ինչպես նաև փաստաթղթերի և այլ սկզբնաղբյուրների որոշ տպագիր ժողովածուներ⁴, մամուլում առկա հրապարակումներ, որոնցից կարևոր են հատկապես «Մշակ», ՀԺԿ-ի օրգաններ «Ժողովրդի ձայն», «Ժողովուրդ», «Երկիր»⁵, Դաշնակցության «Չանգ», «Հառաջ»⁶, Ռուսաստանի Կադետների «Րեչ» («Речь»), «Ռուսկիե վեդեմոստի» («Русские ведомости»), «Ժողովրդական ազատության կուսակցության լրատու» («Вестник партии народной свободы») և «Կավկասկոե սլովո» («Кавказское слово») պարբերականների հրապարակումները: Ընդ որում, այդ նյութերի զգալի մասն առաջին անգամ է դրվում գիտական շրջանառության մեջ: Հուշագրություններ թեև չկան⁷, սակայն թեմայի լուսաբանման համար օգտակար են եղել որոշ գործիչների հուշերում ՀԺԿ-ին անդրադարձները [9; 14; 19 և այլն]:

ՀԺԿ-ի պատմությանը նվիրված առաջին երկում այդ կուսակցության գործիչներից Օ. Ստեփանյանը փորձել է ապացուցել, որ ՀԺԿ-ն եղել է ապադասակարգային և համաժողովրդական կուսակցություն [17]: Կուսակցության պատմության ուսումնասիրության համար զգալի փաստական տվյալներ կան կուսակցության առաջնորդներ Ի. Ամիրյանի, Գ. Մելիք-Կարազյոզյանի, Ե. Հարությունյանի, Հ. Չոբենցի և այլոց հրապարակումներում [23; 27; 28]: Նրանք բոլորը փորձել են հիմնավորել, որ ՀԺԿ-ն ապադասակարգային, ժողովրդական, դեմոկրատական և իրատեսական քաղաքականությանը դավանող կառույց է: «Ոչ մի հիմք չկա, -գրում է Հ. Մելիք-Կարազյոզյանը, -որ Հայ ժողովրդական կուսակցության գաղափարախոսությունը չի կարելի ամբողջովին սահմանազատել սոցիալիզմի կամ լիբերալիզմի աշխարհայացքներից» [28]:

Արխիվային նյութի սակավությունն ու խորհրդային շրջանում տիրող միակուսակցական համակարգը «նպաստել են» և ՀԺԿ-ի պատմությունը դուրս է մնացել ուսումնասիրողների ուշադրությունից: Միակ բացառությունը Դավիթ Խեչումյանի մի քանի հրապարակումներն են [25; 32]: Միաժամանակ, 1918-1920 թթ. պատմությանն անդրադարձած ուսումնասիրողներից ոմանք՝ մասնավորապես Ռ. Հովհաննիսյանը [11], Լ. Խուրշուդյանն ու Կ. Խուրավերդյանը [33], Ա. Հակոբյանը [12; 26, էջեր 106-111],

Վ. Մելիքյանը [13], Հ. Վարդիվառյանը [18, էջեր 315-391], Գ. Ավագյանը [8], Վ. Բաբաջանյանը⁸, Վ. Վիրաբյանը [20] և ուրիշներ, այս կամ այն չափով խոսել են ՀԺԿ-ի մասին: Իսկ խորհրդային նշանավոր պատմաբան Լ. Ս. Սալիբինն իր մենագրությանը կից լրացման մեջ հիշատակում է նաև ՀԺԿ-ին և բնութագրում նրան որպես լիբերալ բուրժուազիայի շահերն արտահայտողի [22, էջ 336]: ՀԺԿ-ի մասին խոսվում է նաև վրացի պատմաբան Ա. Կուլջիրիի դոկտորական ատենախոսությունում: Խոսելով Անդրկովկասում կադետական տիպի կուսակցությունների մասին նա հպանցիկ անդրադառնում է նաև ՀԺԿ-ի ծրագրային որոշ դրույթների [34, էջեր 22-23]:

ՀԺԿ-ին նվիրված ամփոփ ուսումնասիրությունն առ այսօր գրված չի: Այդպիսի փորձ 1987 թ. կատարել է Դ. Խեչումյանը⁹, ով վկայակոչելով մեծ թվով պատմաբանների աշխատություններ, իրավացիորեն արձանագրում է. «Եթե հայ մյուս կուսակցությունների պատմությունն ինչ որ չափով լավ կամ վատ ուսումնասիրված է, ապա ՀԺԿ-ն պատմագիտական աշխատություններում սոսկ հիշատակված է» [32, էջ 8]: ՀԺԿ-ի պատմությանն անդրադարձել է նաև Ա. Հակոբյանը [12; 26], ով իրավացիորեն նկատել, որ հայ քաղաքական կուսակցությունների մեծ մասի և մասնավորապես ՀԺԿ-ի գաղափարախոսությանն ու գործունեությանն առավել բնորոշ են եղել ազգային, քան թե դասակարգային մոտեցումները. «Ժողովրդականներն իրենց դավանանքով և հետապնդած նպատակներով ազգային են: Նրանց համար գլխավորը ոչ թե դասակարգային, այլ ազգային, պետական շահն էր: Կուսակցության ծրագրում ընդգծվում էր նրա ազգային և ապադասակարգային լինելու հանգամանքը» [26, էջ 110]: Միաժամանակ Ա. Հակոբյանը պարզաբանում է, թե ինչու է ժողովրդականներին խորհրդահայ պատմագիտությունն անվանել հայ կադետներ. «Խնդիրն այն էր, որ բուրժուական որակվող կուսակցությանը ԽՍՀՄ-ում չէր կարելի անվանել «ժողովրդական» [26, էջ 106]: Գնահատելի է նաև այն, որ Ա. Հակոբյանը շեշտում է, թե «ՀԺԿ-ն, ապրելով հետագա քաղաքական բարեշրջում, լիովին կանգնեց ազգային հողի վրայ» [26, էջ 108]:

Հիմնախնդիրը

³ Եղիշե Չարենցի անվան Գրականության և արվեստի թանգարանի արխիվ, Ա. Չոպանյանի, Հ. Թումանյանի, Շիրվանզադեի, Ս. Արեղյանի, Թ. Ազատյանի ֆոնդերը և այլն:

⁴ Օրինակ՝ [4; 6; և այլն]:

⁵ Լույս է տեսել Բաքվում 1919 թ.:

⁶ Լույս է տեսել Երևանում 1919 և 1920 թթ.:

⁷ Լավ է, որ գոնե իրենց հուշերում ՀԺԿ-ին երբեմն անդրադարձել են Ս. Վրացյանը [21] Ա. Խատիսյանը [10], Ա. Ահարոնյանը [7], Ա. Դարբինեանը [9], Ա. Խոնդկարյանը [24]:

⁸ Միջկուսակցական հարաբերությունները Հայաստանի Հանրապետությունում 1918-1920 թթ., Ե., 2017:

⁹ Չնայած Հայաստանում և Մոսկվայում մեր համառ փնտրություններին, ատենախոսության տեքստը չհաջողվեց գտնել: Սակայն դրա փոխարեն ունենք սեղմագրի ռուսերեն տարբերակը, որն էլ հնարավորություն է ընձեռում ամբողջական, բայց ոչ լիակատար պատկերացում կազմել ատենախոսության բովանդակության և քննարկված հարցերի մասին: Տե՛ս [32].

Խորամուխ չլինելով հարցի էության մեջ և նկատի ունենալով այն, որ ռուսական Կադետների կուսակցության սոցիալական հենքը ռուսական բուրժուազիայի ներկայացուցիչներն էին և, որ այն արտահայտում ու պաշտպանում էր այդ դասակարգի շահերը, որոշ ուսումնասիրողներ չԺԿ-ին հաճախ նույնացրել են Կադետների (Սահմանադրական դեմոկրատներ) հետ:¹⁰ Այնինչ փաստերը ցույց են տալիս, որ չԺԿ-ն, ի տարբերություն հպատակ ժողովուրդներին ազգային-մշակութային ինքնավարություն խոստացող վերջինների, ուներ ընդգծված ազգային նկարագիր: ՉԺԿ-ն հիմնադրվեց արևելահայ քաղաքական կյանքում մեծ դերակատարություն ունեցող «Մշակ» թերթի շուրջ համախմբված մի խումբ մտավորականների կողմից (նախաձեռնող խումբը չ. Առաքելյան, Մ. Պապաջանյան, Ս. Հարությունյան, Լ. Ղուլյան. Գ. Մելիք-Ղարազյոզյան և ուրիշներ) 1917 թ. ապրիլի 11-ին: Նույն օրը հրապարակվեց հռչակագիր, որը ծրագրային բովանդակություն ուներ [1, ֆ. 1021, գ. 7, ց. 11, թ. 1-2; 1, ֆ. 1022, գ. 7, գ. 96, թ. 26; 35, 7.IV.1917]: Զանի որ այդպիսիք գտնելու ուղղությամբ մեր ջանքերն անարդյունք եղան, ենթադրում ենք, որ չԺԿ-ն զինանշան, դրոշ կամ մեկ այլ խորհրդանիշ չի հասցրել ստեղծել:

Կարճ գոյության ընթացքում գումարվել են կուսակցության երկու համագումար (1917 թ. սեպտեմբերի 24-28-ը Թիֆլիսում և 1919 թ. սեպտեմբերին Երևանում): Դրանցում ընդունվել են չԺԿ-ի երկու ծրագրերը և կանոնակարգվել այլ կազմակերպական հարցեր: Մեր նախորդ հրապարակումներում անդրադարձել ենք չԺԿ-ի պատմության մի շարք հարցերի¹¹: Այս դեպքում կներկայացնենք այն սոցիալական հենքը, որի վրա ստեղծվել և որի շահերն էր արտահայտում ու պաշտպանում այդ կուսակցությունը:

Հիմնադրման պահին չԺԿ առաջնորդները հայտարարում էին, որ պետք է ստեղծեն այնպիսի կուսակցություն, որը կմիավորի ոչ միայն ազատական տարրերին, այլև ապադասակարգային մտավորականությանը և այլ համանման խավերի: Այդ հայտարարությունն ինքնանպատակ չէր: Հիմնականում արևելահայ ունեւերների

կողմից ստեղծված չԺԿ-ն, դասակարգային կազմով լինելով փոքրաթիվ, չէր կարող կազմված լինել միայն իր դասակարգի անդամներից: Դա էր պատճառը, որ նրանք օգտվելով հասարակության մյուս շերտերի քաղաքական անհասունությունից և տարբեր բառախաղերով քողարկելով իրենց դասակարգային իսկական էությունը և նպատակները, գիտակցաբար իրենց հռչակեցին «ժողովրդական», «ժողովրդավարական» և «ապադասակարգային»: Այդ ամենի արդյունքում չԺԿ-ն սոցիալական կազմով միատարր չէր և բաղկացած էր հիմնականում երկու մասից.

1. **Աջ թևը**, որի մեջ մտնում էին ֆարքիկատերերը, առևտրականները, գյուղական մեծահարուստները, բուրժուական մտավորականությունը [1, ֆ. 4047, ց. 1, գ. 562; 35, 14.09.1917; 36, 29.06.1919], կուսակցությանը ձգում էին բուրժուական լիբերալիզմի կողմը:

2. **Ձախ թևը**՝ քաղաքային և գյուղական մանր ու միջին շերտերը, որոնք ձգտում էին կուսակցությանը ժողովրդավարական երանգ հաղորդել:

Իրականում, ինչպես նշում էին կուսակցության տեսաբանները, չԺԿ-ի սոցիալական կազմի միջուկը կազմում էր բուրժուական մտավորականությունը [35, 14.09.1917; 36, 29.06.1919]: Այդ պատճառով էլ չԺԿ-ականներն իրենց կազմակերպությունն անվանում էին «**մտավորականների կուսակցություն**» [37, 17.09.1917]:

ՉԺԿ-ի դասակարգային էությունը ճիշտ հասկանալու համար կարևոր է պատասխանել հետևյալ հարցերին.

ա) ինչպիսի՞ սոցիալ-քաղաքական նպատակներ էր հետապնդում այն,

բ) գործնականում հասարակության սոցիալական ո՞ր շերտերի շահերն էր պաշտպանում:

Հիմնարար փաստաթղթերում և մամուլում չԺԿ-ն հանդես էր գալիս հայության հասարակական կյանքի եվրոպականացման կոչերով: Ազգային կրթության, լուսավորության և գիտության զարգացման համար ձգտում էր Հայաստանն առաջնորդել կապիտալիստական զարգացման ուղիով, ստեղծել «**միացեալ և անկախ**» Հայաստան, հիմնել պառլամենտական կարգեր: Այդ սոցիալ-քաղաքական նպատակը բխում էր նրա դասակարգային էությունից:

Ժողովրդականների դասակարգային էությունը հասկանալու համար կարևոր է և էական նշանակություն ունի նաև այն, թե ինչպես էր նա տեսնում տարբեր քաղաքական հարցեր լուծումը, ինչպիսի վերաբերմունք էր դրսևորում սոցիալքաղաքական իրադարձություններին: Եթե խաղաղ պայմաններում հնարավոր էր ինչ որ ձևերով քողարկել, ապա երկիրը ցնցող ճգնաժամային իրավիճակներում ակնհայտ երևում էր նրա դասակարգային էությունը:

¹⁰ Պատմաբան Պավել Միլյուկովի առաջնորդությամբ 1905 թ. հոկտեմբերի 12-18-ին Մոսկվայում տեղի ունեցած հիմնադիր համագումարում հիմնադրվեց «**Սահմանադիր դեմոկրատական կուսակցությունը**» (ռուսերեն՝ Конституционно-демократическая партия - КаДет), որի գաղափարախոսությունը սոցիալական լիբերալիզմն էր, ռուսական ազգայնականությունը, սահմանադրականությունը և գաղափարախոսական պյուրալիզմը: Կուսակցությունը նախատեսում էր Ռուսաստանում հիմնել սահմանադրական միապետություն: Կենտրոնական օրգաններն էին «Ռեչ» («Речь») թերթը և «Վեստնիկ պարտիի նարոդնոյ սվոբոդի» («Вестник партии народной свободы») ամսագիրը: Տե՛ս [5]:

¹¹ [16; 29, էջեր 42-46; 30, էջ 68-94, 31, էջ 57-66 և այլն]:

Հատկապես սոցիալ քաղաքական իրադարձությունների հանդեպ դրսևորած վերաբերմունքից պարզ էր դառնում ՀԺԿ-ի հակահեղափոխական և իրականում ոչ ժողովրդավարական իրական բնույթը: Կուսակցության կենտրոնական մամուլի խմբագրականներում և գաղափարախոս գործիչների ելույթներում դրանք հաստատող փաստեր շատ կան: Օրինակ՝ մի խմբագրականում «Ժողովուրդը» շուկայական հարաբերությունները համարելով անհրաժեշտ և անխուսափելի՝ կոչ էր անում հարգել մասնավոր սփականության իրավունքը և խթանել մասնավոր նախաձեռնությունը: Միաժամանակ քննադատում էր բոլոր նրանց ովքեր դեմ էին կապիտալիզմի զարգացմանը [37, 20.09.1920]:

Մեկ այլ հրապարակման մեջ էլ կարդում ենք. «Անհրաժեշտ է, գրում էր կուսակցության «Ժողովրդի Ձայն» պաշտոնաթերթը, որպեսզի կապիտալիզմը դրվի այնպիսի պայմաններում, որ այն զարգանա, առաջընթաց ապրի մեր երկրում, հարկավոր է կապիտալին և ակցիոներական ընկերություններին գործունեության լիակատար ազատություն տալ» [36, 27.03.1919]: Կապիտալիզմի խրախուսումը, պառլամենտարիզմով հրապուրվելը և ունեւորների շահերի պաշտպանությունն ինքնին ևս խոսում են ՀԺԿ-ի դասային բնույթի մասին:

ՀԺԿ-ի դասակարգային բնույթի մասին փաստում նաև այն իրողությունը, որ այդ հիմնախնդրով նա մշտական տարակարծությունների մեջ էր մյուս կուսակցությունների հետ: Օրինակ Դաշնակցությունը ՀԺԿ-ին վերաբերում էր «որպես ակնհայտ բուրժուական, դասային և շատ հարուստ կազմակերպության» [38, 15.12.1918]: Իսկ հայկական Սոցիալ դեմոկրատական բանվորական կուսակցությունն էլ բնութագրում ՀԺԿ-ին որպես. «հեղինեղուկ և անկայուն, անհետևողական և անհետատես, էությանը և հավատով բուրժուական՝ մշտապես իշխանության մասին երազող» [1, ֆ. 4041, ց. 1, գ. 4, թ. 16]: Բոլշևիկյան «Բանվորի կռիվ» թերթն էլ ՀԺԿ-ին համարում էր առևտրականների և քահանաների կուսակցություն» [39, 28.07.1917]: Այսինքն, ՀԺԿ-ի սոցիալական հենքը ազատական բուրժուազիան էր: Այն տիպիկ բուրժուական կուսակցություն էր, որի հիմնադրումը հայկական բուրժուազիայի քաղաքական համախմբման օրինաչափ և օրինական արդյունք էր:

Կուսակցության դասակարգային բնույթի մասին է վկայում նաև այն իրողությունը, որ իրեն մտավորականության քաղաքական ու տնտեսական շահերի պաշտպան [3] համարող ՀԺԿ-ն ողջունեց «մեծ և անարյուն ու բոլոր ժողովուրդներին ազատություն» բերած [1, ֆ. 4033, ց. 5, գ. 310, թ. 6] փետրվարյան հեղափոխությունն ու աջակցություն հայտնեց «միակ օրինավոր իշխանություն» Ժամանակավոր

կառավարությանը [3]: Իսկ ավելի ուշ, «դեմ է խորհրդային կարգերին ու Խորհրդային Ռուսաստանին» [1, ֆ. 222, ց. 1, գ. 5, թ. 31] և կոչ էր անում «կռվել պետությունը քայքայող բոլշևիզմի դեմ» [35, 3.X.1917]: Ապադասակարգային և չափավոր ուղեգիծ որդեգած, դասակարգային կռիվը ազգային ոգին թուլացնող համարող ՀԺԿ-ն հայտարարեց, որ դեմ է բոլշևիկյան Ռուսաստանին, հետագայում կողմնորոշվեց դեպի Եվրոպա [37, 14.III.1919] և շեշտեց. «Մեզ՝ հայերիս համար Արևմուտքից է ծագում գարնան ջերմ ու պայծառ արեգակը» [37, 14.III.1919]:

Ի դեպ, «բուրժուական» որակվող ժողովրդական (ռամկավար) և ազատական (լիբերալ) կուսակցությունները գնահատելիս անհրաժեշտ ենք համարում հաշվի առնել հայ ժողովրդի պատմության առանձնահատկություններն ու դրանցից բխող հետևյալ հանգամանքները: Որպես ազգային տիպի կուսակցություններ՝ դրանք ընդունում էին ազգային շահերի գերակայությունը դասակարգային նկատմամբ և չէին ճանաչում որևէ դասակարգային առանձնաշնորհում: Հանդես էին գալիս ազգային դիմագծի և նրա օրինական շահերի ու պատմաքաղաքական իրավունքների պաշտպանությամբ՝ միաժամանակ հարգելով մյուս ժողովուրդների իրավունքներն ու շահերը: Այս տիպի կուսակցությունների ընկերային աշխարհայացքի առանցքն անհատի բոլոր տեսակի կարողությունների (ֆիզիկական, մտավոր և բարոյական) ազատ դրսևորման մեջ էր: Եվ, վերջապես, նրանք կողմնակից էին քաղաքական, տնտեսական ու ընկերային բարեփոխումների ոչ հեղափոխական՝ բարեշրջման (եվոլյուցիոն) ուղուն:

Իրականում այդ, ՀԺԿ-ն ոչ հեղափոխական գործելակերպի, աստիճանական, խաղաղ բարեշրջման, խորհրդարանական, իրավական, ժողովրդավարական պետության կողմնակից կուսակցություն էր: Կուսակցությունը պաշտպանում էր կապիտալի, մասնավոր սեփականության և շուկայական հարաբերությունների գերակայությունը: Հայկական հարցում համերաշխվում էր Հայ Մահմանադրական ռամկավար կուսակցության¹² «ծովից ծով Հայաստանի» պահանջին: Ժողովրդականները հայտարարում էին, որ իրենք հեղափոխականներ չեն, ընդունում և պաշտպանում են այն տեսակետը, որ բոլոր ազգերը, ինչպես և հայ ժողովուրդը, պիտի առաջադիմեն ու զարգանան խաղաղ, «կուլտուրական համառ աշխատանքի ճանապարհով» և ոչ արյունահեղության և բռնությունների միջոցով [1, ֆ. 4033, ց. 7, գ. 6, թ. 1]¹³: ՀԺԿ-

¹² Այդ մասին մանրամասն տե՛ս [30]:

¹³ Տե՛ս նաև [2]

ի ծրագիրն իր աշխարհայացքին համապատասխան՝ կուսակցությունն հայտարարեց ապադասակարգային և աստիճանական զարգացման կողմնակից [35, 25.06.1917]: Կուսակցությունը նաև ջրաքցրեց, որ «դեմ է խորհրդային կարգերին ու Խորհրդային Ռուսաստանին» [1, ֆ. 222, ց. 1, գ. 5, թ. 31]: Հետագայում էլ կողմնորոշվեց դեպի Եվրոպա: Ընդհանուր պետական և Ազգային հարցեր բաժիններից և 75 հոդվածներից բաղկացած ծրագրում հայտարարվում էր, որ ՀԺԿ-ն համազգային, աստիճանական բարեփոխումների կողմնակից վերդասակարգային կուսակցություն է: Հայաստանի խորհրդայնացումից հետո ՀԺԿ-ն տարագրվեց և հետագայում միաձուլվեց Ռամկավար ազատական կուսակցությանը:

Եզրակացություններ

1. XX դարի սկզբների բուռն իրադարձություններով հարուստ արևելահայ տնտեսական, քաղաքական և հոգևոր-մշակութային կենտրոն Թիֆլիսում ասպարեզ իջած Հայ ժողովրդական կուսակցությունն ստեղծվեց արևելահայ խոշոր բուրժուազիայի և նրա ծոցից դուրս եկած մտավորականության կողմից և պաշտպանում էր նրանց շահերը:

2. Հօգուտ այն թեզի, որ ՀԺԿ-ն խոշոր բուրժուազիայի շահերի արտահայտիչն էր, վկայում է այն իրողությունը, որ նա հիմնականում երկրորդում էր ռուսական խոշոր բուրժուազիայի շահերի արտահայտիչ Կադետների կուսակցության գաղափարախոսությունը: Միակ տարբերությունը վերաբերում էր ազգային հարցին և ստեղծված իրավիճակում դա բնական երևույթ էր:

3. Հետագա գործունեության ընթացքում ևս ակնհայտ դրսևորվեց ՀԺԿ-ի դասակարգային էությունը: Թիֆլիսահայ ճոխ և փափկասուն կյանքին սովոր ՀԺԿականների մեծ մասը, այդ թվում Հայաստանի Հանրապետության 4 նախարարները, չտեղափոխվեցին Երևան, որտեղ կյանքի պայմանները դժվարին էին:

4. Վերջապես այդ կուսակցության դասակարգային բնույթի մասին է վկայում նաև այն փաստը, որ նրանք ջերմորեն ողջունում ու պաշտպանում էին Փետրվարյան բուրժուազեմոկրատական հեղափոխությունն ու պաշտպանում էին Ժամանակավոր կառավարությանը, իսկ հոկտեմբերյան հեղաշրջումից սարսափած՝ լքեցին երկիրն ու հեռացան արտասահման:

Օգտագործված գրականության ցանկ

Արխիվ և տպագիր սկզբնաղբյուրներ

1. Հայաստանի Ազգային արխիվ (ՀԱԱ)
2. Ծրագիր Հայ Ժողովրդական կուսակցության. – Թիֆլիս, 1917:

3. Ծրագիր Հայ Ժողովրդական կուսակցության. – Երևան, 1919:
4. Նիլեր Վ. Յ. Դաշնակցության պատմության համար, խմբ. Հր. Տասնապետեանի, հրատ. Վ. Յ. Դաշնակցության, Պեյրութ, Ա, հատ., 1984, Բ. հատ., 1985, Գ. հատ., 1976, Դ. հատ., 1982, խմբ. Ե. Փամպուրեանի, Պեյրութ, Ե. 2007, Զ. հատ., 2010, Է. հատ., 2010, Ը. հատ., 2011, Թ. հատ., 2012:
5. Политические партии России. Конец XIX- первая треть XX века: Энциклопедия, Редкол: Шелохаев В.В. (отв. ред.) и др. – М., РОССПЭН, 1996. – 872 с.
6. «Документы и материалы по Внешней политики Закавказья и Грузии». – Тифлис, 1919.

Գրականություն

7. Ահարոնյան Ա., Սարդարապատից մինչև Սևր և Լոզան, Քաղաքական օրագիր, 1919-1927, Ե., 2001:
8. Ավագյան Գ., Միքայել Պապաջանյանի հասարակական-քաղաքական գործունեությունը, ատենախոսության սեղմագիր. – Ե., 2009:
9. Դարբինեան Ա., Հայ ազատագրական շարժման օրերէն. – Ե., 2003:
10. Խատիայան Ա., Հայաստանի Հանրապետության ծագումն ու զարգացումը». – Պեյրութ, 1968:
11. Հայաստանի Հանրապետություն (4 հատոր, The Republic of Armenia, հատոր 1 (1971) և հատոր II (1982), հատորներ III և IV (1996) U.C. Press):
12. Հակոբյան Ա., Հայաստանի խորհրդարանը և քաղաքական կուսակցությունները (1918-1920 թթ. – Ե., 2018:
13. Մելիքյան Վ., 1917 փետրվարյան հեղափոխությունը և Հայաստանը. – Ե., 1997:
14. Ռուբեն, Հայ յեղափոխականի մը հիշատակները, հ. Է. – Լոս Անճելոս, 1952:
15. Սարգսյան Ս., Հայ Սահմանադրական ռամկավար կուսակցություն (1908-1921 թթ.) . – Ե., 2009:
16. Սարգսյան Ս., Արևելահայ ռամկավար մամուլը 1918-1920 թթ. – Ե., 2019:
17. Ստեփանյան Օ., Հայ ժողովրդական կուսակցությունը համաժողովրդական և ապադասակարգային է. – Ալեքսանդրապոլ, 1919:
18. Վարդիվառյան Հ., Մեծ երազի ճամբուն ուղեւորները եվ համապարփակ պատմութիւն Ռամկավար ազատական կուսակցութեան, հատ. Ա. – Նիւ Ծըրզի, 2015:
19. Վարանդյան Մ., Վ. Յ. Դաշնակցության պատմութիւն, հ. 1. – Փարիզ, 1932, հ. 2. – Գահիրէ, 1950:
20. Վիրաբյան Վ., Հայաստանի Հանրապետությունը 1918-20 թթ., կառավարության ռազմաքաղաքական գործունեությունը և կուսակցությունները (Հայոց քաղաքական պատմության էջերից) . – Ե., 1999:
21. Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետութիւն. – Փարիզ, 1928:
22. Спирин Л. М., Крушение помещичьях и буржуазных партий в России. – М., 1977.

Հոդվածներ

23. **Ամիրեան Ի.**, Մեր հիմնական գաղափարները // «Մշակ», 12-15, 17 ապրիլի, 10, 12, 14, 16, 17 մայիսի 1918:
24. **Խոնդկարյան Ա.**, Օպոզիցիան հանրապետական Հայաստանում // «ՎԷՄ», 1933, Ա, էջ 63-82, Բ, էջ 68-79, 1934, Գ, էջ 76-98, Ե, էջ 43-46):
25. **Խեչումյան Գ.**, Հայ Ժողովրդական կուսակցության գաղափարախոսության և գործունեության հակաժողովրդական էությունը // ԼՀԳ, Եր., 1984, թիվ 2.
26. **Հակոբյան Ա.**, Հայ ժողովրդական կուսակցության գաղափարախոսությունը, ծրագիրը և մարտավարությունը // ԼՀԳ, N 2 (106), 2002, էջեր 106-111:
27. **Հարությունեան Ե.**, Ազատ Հայաստան, «Ժողովուրդ», 5, 8, 12 դեպտեմբերի, 1918:
28. **Մելիք-Կարազեղզեան Հ.**, Հայ ժողովրդական կուսակցությունը և սոցիալիզմը, «Մշակ», 24, 26 դեկտեմբերի 1917:
29. **Սարգսյան Ս.**, Հայ Ժողովրդական կուսակցության հիմնադրումը, // Научно-аналитический журнал «Регион и мир», N 3, 2023.
30. **Սարգսյան Ս.**, Հայ Ժողովրդական կուսակցության գործունեությունը Հայաստանի Հանրապետությունում 1918–1920 թթ. – Ե., «Պատմություն և քաղաքականություն», թիվ 2(3), 2019,
31. **Սարգսյան Ս.**, Կադետներ - Հայ Ժողովրդական կուսակցություն ամնությունները, էջ 57-66 // Научно-аналитический журнал «Регион и мир», N5 (60), 2025:
32. **Хечумян Д.**, Критический анализ идеологии и политики Армянской народной партии /1917-1921гг./, (автореферат) . – Ереван, 1987.
33. **Хуршудян Л., Худавердян К.**, Армянские политические партии. Некоторые вопросы истории и идеологии, «Непролетарские партии и организации национальных районов России в Октябрьской революции и гражданской войне». – Калинин, 1980, с.102.
34. **Куджири А. Х.**, Политические партии и национальный вопрос в Закавказье в период подготовки и проведения Октябрьской революции. – Тбилиси, 1970.

Մամուլ

35. «Մշակ» հասարակական-քաղաքական, գրական թերթ: – Թիֆլիս, 1872-1921 թթ.:
36. «Ժողովրդի Ձայն» քաղաքական, հասարակական-գրական օրաթերթ, Օրգան Հայ ժողովրդական կուսակցության: – Թիֆլիս, 1918-1919 թթ.:
37. «Ժողովուրդ» քաղաքական, հասարակական-գրական օրաթերթ, Օրգան Հայ ժողովրդական կուսակցության: – Երևան, 1918-1920:
38. «Զանգ», ՀՅԴ պաշտոնաթերթ: – Երևան, 1918-1919:
39. «Բանվորի կոիվ», բոլշևիկների պաշտոնաթերթ: – Դոնի Ռոստով [Նոր Նախիջևան], 1920:

Տճանա/Հանձնվել է՝ 04.02.2026

Рецензирована/Գրախոսվել է՝ 10.02.2026

Принята/Ընդունվել է՝ 16.02.2026